**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի վերափոխման ռազմավարությունը (ՀՎՌ) երկարաժամկետ, ապաքաղաքական, բարձր մակարդակի հովանոցային ռազմավարություն է, որն առաջնորդվում է պետության կողմից և հանդիսանում է գլխավոր ռազմավարական օրակարգը:

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ռազմավարական թիմում առկա են բազմաթիվ հնարավորություններ ինչպես սկսնակ, այնպես էլ փորձառու մեր հայրենակիցների համար՝ կամավորական հիմունքներով ներգրավվելու ՀՎՌ շուրջ տարվող աշխատանքներին, մաս կազմել վառ ապագային միտված համընդհանուր այս շարժմանը և ստանալ բազմաթիվ այլ հնարավորություններ:

ՀՎՌ թիմում այս պահին առկա են հետաքրքիր փորձառություն տրամադրող ճկուն գրաֆիկով կամավորության հնարավորություններ՝ հետևյալ ուղղություններով.

- ՈԼՈՐՏԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԵՄ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ,
- ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ,
- ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀԻՄՆԱԿԱՆ),
- ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԴԻԶԱՅՆ,
- ԹՎԱՅԻՆ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ) ՄԱՐՔԵԹԻՆԳ,
- ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
- ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ:

Մանրամասները՝ ստորև կամ սեղմելով համապատասխան ուղղությանը:

Մենք հենց ձե՛զ ենք փնտրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Հայաստանի վերափոխման ռազմավարության (ՀՎՌ) թիմը կամավորական հիմունքներով և նվազագույնը 5 ամիս ժամկետով համագործակցության է հրավիրում վերլուծական միտք ունեցող անձանց:

Նպատակ.
Ըստ ոլորտների թիրախների, խնդիրների և լուծումների վերհանման համար տրամադրված բովանդակության նախնական մշակում, բաց աղբյուրների ուսումնասիրություն:

Ուղղություններ.
1. Անվտանգություն և միջազգային հարաբերություններ,
2. Իրավական,
3. Կրթություն և գիտություն,
4. Մշակույթ և ինքնություն,
5. Հանրային առողջություն և սպորտ,
6. Մեդիա և հանրային հաղորդակցություն,
7. Տարածքային զարգացում և ենթակառուցվածքներ,
8. Ժողովրդագրություն և սոցիալական հարցեր,
9. Հանրային կառավարում,
10. Տեխնոլոգիաներ,
11. Էներգետիկա,
12. Շրջակա միջավայր,
13. Սփյուռք,
14. Տնտեսություն, ֆինանսներ և աշխատուժ:

Պահանջներ.
- համապատասխան ոլորտի բավարար պատկերացում և գիտելիք[1],
- վերլուծական և հետազոտական համապատասխան կարողություններ, վերլուծական և քննադատական մտածողություն,
- ռազմավարական, համակարգային և կոնցեպտուալ մտածողություն, մեծ պատկերը տեսնելու ունակություն,
- ընդհանուր իրազեկվածություն գլոբալ միտումների և խնդիրների մասին, համակողմանի զարգացվածություն,
- ժամանակի կառավարման հմտություններ,
- թիմով աշխատելու կարողություններ[2],
- հայրենիքի զարգացման հանդեպ առաքելության զգացում,
- շարունակաբար սովորելու և զարգանալու ունակություն և ձգտում,
- բարձր արդյունավետության ձգտում,
- կատարելության ձգտում, մանրուքների նկատմամբ ուշադրություն և բարձր կարգապահություն, պատասխանատու և պրոակտիվ վերաբերմունք,
- արդյունամետություն, դիմակայունություն, կոգնիտիվ (իմացական) ճկունություն,
- հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների տիրապետում[3],
- բարեվարքության բարձր մակարդակ,
- թվային գրագիտություն:

[1] Առավելությունը կտրվի տվյալ ոլորտի մասնագիտական կրթություն ստացածներին, այնուհետև ստացողներին
[2] Առավելությունը կտրվի փոքր թիմեր առաջնորդելու հմտություններ ու փորձառություն ունեցողներին
[3] Առավելությունը կտրվի ևս մեկ օտար լեզվի (ֆրանսերեն, իսպաներեն կամ այլ) տիրապետողներին

Տրվող հնարավորություններ.

- ☑ անմիջական մասնակցություն ունենալ Հայաստանի զարգացման օրակարգի մշակմանն ու իրագործմանը, ապագայի կերտմանը,
- ☑ ձեռք բերել պետական կառավարման համակարգում, այնպես էլ հանրային տարբեր օղակների հետ աշխատանքի պրոֆեսիոնալ եզակի փորձ և հմտություններ,
- ☑ աշխատել ճկուն և ստեղծարար միջավայրում, կատարել ինքնատիպ, յուրահատուկ աշխատանք՝ յուրահատուկ փորձառությամբ,
- ☑ ունենալ անհատական զարգացման պլաններ և մասնակցել համապատասխան թրենինգների, ստանալ արդյունքների վերաբերյալ հետադարձ կապ և գնահատում, ապահովել մասնագիտական աճ,
- ☑ դրական արդյունքների դեպքում ստանալ համապատասխան շնորհակալագիր և(կամ) երաշխավորագիր ՀՀ վարչապետի օգնականի կողմից:

Հայտերի տրամադրում և դիտարկում.

1. Անհրաժեշտ է manvel.melikyan@gov.am հասցեին ուղարկել ինքնակենսագրականը (CV)՝ նամակի վերնագրում նշելով «Բովանդակության մշակում - դիմում», իսկ հիմնական տեքստում նշելով, թե որ ուղղությանը կամ ուղղություններով եք դիմում,
2. ՀՎՌ թիմի կողմից ինքնակենսագրականների դիտարկումից հետո որոշ թեկնածուներ կիրավիրվեն հարցազրույցի,
3. Հնարավոր է թեստային, փորձնական առաջադրանքների տրամադրում:

Հավելյալ տեղեկատվություն.

Հասցե. ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 1:

Աշխատանքային գրաֆիկը՝ ճկուն:

Հնարավոր է հեռակա ներգրավվածություն՝ առկա անցկացվող քննարկումներին և թրենինգներին պարտադիր մասնակցելու պահանջով:

Հարցերի դեպքում կարող եք գրել վերոնշյալ էլ. փոստի հասցեով կամ զանգահարել +37441895611 հեռախոսահամարով:

** Սույն հնարավորությունը հանդիսանում է մշտական բնույթ չկրող գործողությունների համալիր և համապատասխանում է «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 7) կետին:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՄԵԹՈԴԱԲԱՆԻ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Հայաստանի վերափոխման ռազմավարության (ՀՎՌ) թիմը կամավորական հիմունքներով համագործակցության է հրավիրում մեթոդաբանի օգնականների:

### Նպատակ.

Մեթոդաբանությունների և ուղեցույցների պատրաստման օժանդակում:

### Նկարագիր.

ՀՎՌ հետ կապված համահայկական ընդգրկում ունեցող գործընթացների կազմակերպման, համապատասխան վստահելի կառուցակարգերի ներդնման համար անհրաժեշտ մեթոդաբանությունների, կանոնակարգերի և ուղեցույցների պատրաստման օժանդակություն՝ տվյալների հավաքագրում և վերլուծություն, թարգմանությունների, մեթոդաբանների կողմից հանձնարարված այլ առաջադրանքների իրականացում:

### Պահանջներ.

- բակալավրի առնվազն 3-րդ կուրսի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսումնառող կամ շրջանավարտ[1],
- մեթոդաբանությունների, ռազմավարական շրջանակների, որոշումների կայացման և հանրային ներգրավման մեխանիզմների մասին պատկերացում,
- վերլուծական, հետազոտական և խնդիրներ լուծելու հմտություններ, վերլուծական և քննադատական մտածողություն,
- ռազմավարական, համակարգային և կոնցեպտուալ մտածողություն, մեծ պատկերը տեսնելու ունակություն,
- արդյունքին միտվածություն, դիմակայունություն, կոգնիտիվ (իմացական) ճկունություն,
- ստեղծագործ և ճկուն միտք,
- հաղորդակցական հմտություններ,
- շահակիցների հետ հարաբերությունների կառավարման մասին պատկերացում,
- հայրենիքի զարգացման հանդեպ առաքելության զգացում,
- շարունակաբար սովորելու և զարգանալու ունակություն և ձգտում,
- բարձր արդյունավետության ձգտում,
- կատարելության ձգտում, մանրուքների նկատմամբ ուշադրություն և բարձր կարգապահություն, պատասխանատու և պրոակտիվ վերաբերմունք,
- թիմով աշխատելու կարողություններ,
- ժամանակի կառավարման հմտություններ,
- արևելահայերենի գերազանց տիրապետում[2],
- Հայաստանի քաղաքական, իրավական և սոցիալական միջավայրին ծանոթություն,
- թվային գրագիտություն, տեխնիկական իմացություն և կարողություններ,
- բարեվարքության բարձր մակարդակ,
- ծրագրերի կառավարման բազային հմտություններ *(որպես առավելություն)*:

[1] Առավելությունը կտրվի սոցիոլոգիա, հանրային կառավարում, հանրային քաղաքականություն, քաղաքագիտություն, ռազմավարական կառավարում, ռազմավարական պլանավորում մասնագիտություններին

[2] Առավելությունը կտրվի անգլերենի, ռուսերենի, ֆրանսերենի և(կամ) իսպաներենի տիրապետողներին

## Տրվող հնարավորություններ.

- ☑ անմիջական գործուն մասնակցություն ունենալ Հայաստանի զարգացման օրակարգի մշակմանն ու իրագործմանը, ապագայի կերտմանը,
- ☑ մասնակցել իր ընդգրկումով, մարտահրավերներով և մոտեցումներով նմանը չունեցող մեթոդական ապարատի ձևավորմանը, աշխատել տարբեր երկրների փորձառու մասնագետների հետ,
- ☑ ձեռք բերել պետական կառավարման համակարգի, այնպես էլ հանրային տարբեր օղակների հետ աշխատանքի պրոֆեսիոնալ եզակի փորձ և հմտություններ,
- ☑ աշխատել ճկուն և ստեղծարար միջավայրում, կատարել ինքնատիպ, յուրահատուկ աշխատանք՝ յուրահատուկ փորձառությամբ,
- ☑ ունենալ անհատական զարգացման պլաններ և մասնակցել համապատասխան թրենինգների, ստանալ արդյունքների վերաբերյալ հետադարձ կապ և գնահատում, ապահովել մասնագիտական աճ,
- ☑ դրական արդյունքների դեպքում ստանալ համապատասխան շնորհակալագիր և(կամ) երաշխավորագիր ՀՀ վարչապետի օգնականի կողմից:

## Հայտերի տրամադրում և դիտարկում.

1. Անհրաժեշտ է manvel.melikyan@gov.am հասցեին ուղարկել ինքնակենսագրականը (CV)՝ նամակի վերնագրում նշելով «Մեթոդաբանի օգնական - դիմում»,
2. ՀՎՌ թիմի կողմից ինքնակենսագրականների դիտարկումից հետո որոշ թեկնածուներ կհրավիրվեն հարցազրույցի,
3. Հնարավոր է թեստային, փորձնական առաջադրանքների տրամադրում:

## Հավելյալ տեղեկատվություն.

Հասցե. ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 1:

Աշխատանքային գրաֆիկը՝ ճկուն:

Հարցերի դեպքում կարող եք գրել վերոնշյալ էլ. փոստի հասցեով կամ զանգահարել +37441895611 հեռախոսահամարով:

** Սույն հնարավորությունը հանդիսանում է մշտական բնույթ չկրող գործողությունների համալիր և համապատասխանում է «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 7) կետին:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՎԵՐԱՓՈԽՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Հայաստանի վերափոխման ռազմավարության (ՀՎՌ) թիմը կամավորական հիմունքներով համագործակցության է հրավիրում անգլերենից հայերեն թարգմանիչների:

### Նպատակ.

Անգլերենով գրված մասնագիտական նյութերի վերածում բարձրորակ, նրբերանգները հաշվի առնող հայերեն տեքստերի:

### Նկարագիր.

Ռազմավարությանն առնչվող տարատեսակ անգլալեզու նյութերի, մասնավորապես ոլորտային տեղեկությունների, հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքների, բաց աղբյուրներում առկա տվյալների, մեթոդաբանությունների, նուրբ հաղորդակցական երանգ պարունակող նյութերի, անգլալեզու գործընկերների կողմից մշակված և ստացված նյութերի, մասնակցային գործընթացի ընթացքում հավաքագրված անգլերեն նյութերի գրագետ, իմաստին, նրբերանգներին և հայերենի կանոններին ճշգրիտ համապատասխան թարգմանությունների իրականացում:

### Պահանջներ.

- անգլերեն և հայերեն լեզուների գրավոր գերազանց իմացություն,
- որակյալ և կոկիկ գրավոր նյութեր ստեղծելու կարողություն,
- լսելու և արագ ընկալելու կարողություն,
- ստեղծագործ և ճկուն միտք,
- վերլուծական և քննադատական մտածողություն,
- հաղորդակցական հմտություններ,
- շարունակաբար սովորելու և զարգանալու ունակություն և ձգտում,
- բարձր արդյունավետության ձգտում,
- կատարելության ձգտում, մանրուքների նկատմամբ ուշադրություն և բարձր կարգապահություն,
- հայրենիքի զարգացման հանդեպ առաքելության զգացում,
- պատասխանատու և պրոակտիվ վերաբերմունք,
- արդյունքին միտվածություն, դիմակայունություն, կոգնիտիվ (իմացական) ճկունություն,
- թիմով աշխատելու կարողություններ,
- բարեվարքության բարձր մակարդակ,
- թվային գրագիտություն,
- համակարգային և կոնցեպտուալ մտածողություն, մեծ պատկերը տեսնելու ունակություն *(որպես առավելություն)*:

### Տրվող հնարավորություններ.

- ☑ անմիջական մասնակցություն ունենալ Հայաստանի զարգացման օրակարգի մշակմանն ու իրագործմանը, ապագայի կերտմանը,
- ☑ կատարելագործել թարգմանչական կարողությունները, ձեռք բերել թարգմանչական մասնագիտական յուրահատուկ փորձ, հարստացնել աշխատանքների պորտֆոլիոն,

- ձեռք բերել պետական կառավարման համակարգի, այնպես էլ հանրային տարբեր օղակների հետ աշխատանքի հետաքրքիր փորձ և հմտություններ,
- աշխատել ճկուն և ստեղծարար միջավայրում, կատարել ինքնատիպ, յուրահատուկ աշխատանք՝ յուրահատուկ փորձառությամբ,
- ծանոթանալ տարբեր ուղղություններում առաջադեմ, փորձագիտական մտքերի հետ, ձեռք բերել տարատեսակ նոր գիտելիքներ,
- ունենալ անհատական զարգացման պլաններ և մասնակցել համապատասխան թրենինգների, ստանալ արդյունքների վերաբերյալ հետադարձ կապ և գնահատում, ապահովել մասնագիտական աճ,
- դրական արդյունքների դեպքում ստանալ համապատասխան շնորհակալագիր և(կամ) երաշխավորագիր ՀՀ վարչապետի օգնականի կողմից:

## Հայտերի տրամադրում և դիտարկում.

1. Անհրաժեշտ է manvel.melikyan@gov.am հասցեին ուղարկել ինքնակենսագրականը (CV)՝ նամակի վերնագրում նշելով «Անգլերեն թարգմանիչ - դիմում»,
2. ՀՎՌ թիմի կողմից ինքնակենսագրականների դիտարկումից հետո որոշ թեկնածուներ կհրավիրվեն հարցազրույցի,
3. Հնարավոր է թեստային, փորձնական առաջադրանքների տրամադրում:

## Հավելյալ տեղեկատվություն.

Հասցե. ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 1:

Աշխատանքային գրաֆիկը՝ ճկուն:

Ներգրավվածությունն ըստ անհրաժեշտության՝ առկա կամ հեռակա:

Հարցերի դեպքում կարող եք գրել վերոնշյալ էլ. փոստի հասցեով կամ զանգահարել +37441895611 հեռախոսահամարով:

** Սույն հնարավորությունը հանդիսանում է մշտական բնույթ չկրող գործողությունների համալիր և համապատասխանում է «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 7) կետին:*

## ԴԻԶԱՅՆԵՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Հայաստանի վերափոխման ռազմավարության (ՀՎՌ) թիմը կամավորական հիմունքներով համագործակցության է հրավիրում գրաֆիկական դիզայներների:

Նպատակ.
Գրաֆիկական նյութերի և շնորհանդեսների պատրաստում, տվյալների արտապատկերում (վիզուալիզացիա) և(կամ) դիմերեսների (ինտերֆեյսների) նախագծում:

Նկարագիր.
Հետևյալ ցանկից որևէ տիպի դիզայներական աշխատանքների գեղեցիկ և խելամիտ կերպով իրականացում (կարևոր է որակը, ֆորմալ աշխատանքային փորձը պարտադիր չէ).
ա) հակիրճ կամ տվյալներով հարուստ շնորհանդեսների և հաշվետվությունների դիզայն,
բ) թվային և տպագիր հաղորդակցական նյութերի դիզայն,
գ) ինֆոգրաֆիկաների պատրաստում, տվյալների հանրամատչելի արտապատկերում (վիզուալիզացիա),
դ) թվային գործիքների դիմերեսների (UI) և օգտվողների արդյունավետ փորձառության (UX) նախագծում,
ե) դիզայն համակարգի տարրերի հետ կապված փոփոխությունների իրականացում:

Պահանջներ.
- գրաֆիկական դիզայնի համապատասխան ունակություններ,
- հիմնական դիզայներական մասնագիտացված թվային գործիքներից և արհեստական բանականության միջոցով տրվող հնարավորություններից հմտորեն օգտվելու կարողություններ,
- ստեղծագործ և ճկուն միտք,
- հաղորդակցական հմտություններ,
- շարունակաբար սովորելու և զարգանալու ունակություն և ձգտում,
- բարձր արդյունավետության ձգտում,
- կատարելության ձգտում, մանրուքների նկատմամբ ուշադրություն և բարձր կարգապահություն,
- պատասխանատու և պրոակտիվ վերաբերմունք,
- հայրենիքի զարգացման հանդեպ առաքելության զգացում,
- արդյունքին միտվածություն, դիմակայունություն, կոգնիտիվ (իմացական) ճկունություն,
- թիմով աշխատելու կարողություններ,
- ժամանակի կառավարման հմտություններ,
- բարեխղճության բարձր մակարդակ,
- թվային գրագիտություն,

- վերլուծական և քննադատական մտածողություն *(որպես առավելություն)*,
- համակարգային և կոնցեպտուալ մտածողություն, մեծ պատկերը տեսնելու ունակություն *(որպես առավելություն)*,
- դիզայն մտածողության կիրառման փորձառություն *(որպես առավելություն)*:

Տրվող հնարավորություններ.

- ☑ անմիջական գործուն մասնակցություն ունենալ Հայաստանի զարգացման օրակարգի մշակմանն ու իրագործմանը, ապագայի կերտմանը,
- ☑ ձեռք բերել դիզայներական աշխատանքի յուրահատուկ փորձ, հարստացնել աշխատանքների պորտֆոլիոն,
- ☑ աշխատել ճկուն և ստեղծարար միջավայրում, կատարել ինքնատիպ, յուրահատուկ աշխատանք՝ յուրահատուկ փորձառությամբ,
- ☑ ձեռք բերել պետական կառավարման համակարգի, այնպես էլ հանրային տարբեր օղակների հետ աշխատանքի հետաքրքիր փորձ և հմտություններ,
- ☑ դրական արդյունքների դեպքում ստանալ համապատասխան շնորհակալագիր և(կամ) երաշխավորագիր ՀՀ վարչապետի օգնականի կողմից:

Հայտերի տրամադրում և դիտարկում.

1. Անհրաժեշտ է manvel.melikyan@gov.am հասցեին ուղարկել ինքնակենսագրականը (CV)՝ նամակի վերնագրում նշելով «Դիզայներ - դիմում»,
2. ՀՎՌ թիմի կողմից ինքնակենսագրականների դիտարկումից հետո որոշ թեկնածուներ կհրավիրվեն հարցազրույցի,
3. Հնարավոր է թեստային, փորձնական առաջադրանքների տրամադրում:

Հավելյալ տեղեկատվություն.

Հասցե. ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 1:

Աշխատանքային գրաֆիկը՝ ճկուն:

Ներգրավվածությունն ըստ անհրաժեշտության՝ առկա կամ հեռակա:

Հարցերի դեպքում կարող եք գրել վերոնշյալ էլ. փոստի հասցեով կամ զանգահարել +37441895611 հեռախոսահամարով:

** Սույն հնարավորությունը հանդիսանում է մշտական բնույթ չկրող գործողությունների համալիր և համապատասխանում է «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 7) կետին:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# SMM ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Հայաստանի վերափոխման ռազմավարության (ՀՎՌ) թիմը կամավորական հիմունքներով և նվազագույնը 5 ամիս ժամկետով համագործակցության է հրավիրում սոցիալական մեդիաներում մարքեթինգի (SMM) գիտելիքներ և հմտություններ ունեցող անձանց:

## Նպատակ.

Սոցիալական մեդիա հարթակներում համապատասխան բարձրորակ գրառումների պլանավորում և պատրաստում, էջերում ներգրավման և ակտիվության ապահովում:

## Նկարագիր.

Մասնակցություն սոցիալական մեդիայի հիմնական հարթակներում էջերի վարմանը, գրառումների պատրաստմանը (տեքստերի կազմում, դրանց գրավիչ և համահունչ ձևավորում) և տվյալ հարթակի պահանջներին համապատասխանեցմանը, պլանավորմանը, լսարանի ուսումնասիրմանը, էջերում ակտիվության, ներգրավման և հետադարձ կապի ապահովմանը, թվային արշավների նախագծմանը և անցկացմանը, դրանց արդյունավետության ապահովմանը: Կարևոր է աշխատանքի որակը, ֆորմալ աշխատանքային փորձը պարտադիր չէ:

## Պահանջներ.

- սոցիալական տարբեր մեդիաներում էջերի վարման փորձառություն,
- տվյալ սոցիալական մեդիաներում ակտիվության ապահովման հիմնական կանոնների իմացություն,
- արևելահայերեն, արևմտահայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն լեզուներից առնվազն մեկով գրավոր հաղորդակցվելու գերազանց կարողություն, հակիրճ և գրագետ տեքստեր կազմելու ունակություն,
- գրառումների գրավիչ ձևավորման ունակություն,
- մարդկային հոգեբանության որոշակի իմացություն,
- ստեղծագործ և ճկուն միտք,
- հաղորդակցական հմտություններ,
- շարունակաբար սովորելու և զարգանալու ունակություն և ձգտում,
- բարձր արդյունավետության ձգտում,
- կատարելության ձգտում, մանրուքների նկատմամբ ուշադրություն և բարձր կարգապահություն,
- պատասխանատու և պրոակտիվ վերաբերմունք,
- հայրենիքի զարգացման հանդեպ առաքելության զգացում,
- արդյունքին միտվածություն, դիմակայունություն, կոգնիտիվ (իմացական) ճկունություն,
- թիմով աշխատելու կարողություններ,
- բարեվարքության բարձր մակարդակ,
- թվային գրագիտություն,

- տեսաձայնային գրառումների կազմման փորձառություն *(որպես առավելություն)*,
- համակարգային և կոնցեպտուալ մտածողություն, մեծ պատկերը տեսնելու ունակություն *(որպես առավելություն)*:

Տրվող հնարավորություններ.

- ☑ անմիջական մասնակցություն ունենալ Հայաստանի զարգացման օրակարգի մշակմանն ու իրագործմանը, ապագայի կերտմանը,
- ☑ ձեռք բերել թվային մարքեթինգի յուրահատուկ, համահայկական ներգրավվածություն ենթադրող փորձառություն, հարստացնել աշխատանքների պորտֆոլիոն,
- ☑ աշխատել ճկուն և ստեղծարար միջավայրում, կատարել ինքնատիպ, յուրահատուկ աշխատանք՝ յուրահատուկ փորձառությամբ,
- ☑ ձեռք բերել պետական կառավարման համակարգի, այնպես էլ հանրային տարբեր օղակների հետ աշխատանքի հետաքրքիր փորձ և հմտություններ,
- ☑ ունենալ անհատական զարգացման պլաններ և մասնակցել համապատասխան թրենինգների, ստանալ արդյունքների վերաբերյալ հետադարձ կապ և գնահատում, ապահովել մասնագիտական աճ,
- ☑ դրական արդյունքների դեպքում ստանալ համապատասխան շնորհակալագիր և(կամ) երաշխավորագիր ՀՀ վարչապետի օգնականի կողմից:

Հայտերի տրամադրում և դիտարկում.

1. Անհրաժեշտ է manvel.melikyan@gov.am հասցեին ուղարկել ինքնակենսագրականը (CV)՝ նամակի վերնագրում նշելով «SMM - դիմում»,
2. ՀՎՌ թիմի կողմից ինքնակենսագրականների դիտարկումից հետո որոշ թեկնածուներ կհրավիրվեն հարցազրույցի,
3. Հնարավոր է թեստային, փորձնական առաջադրանքների տրամադրում:

Հավելյալ տեղեկատվություն.

Հասցե. ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 1:

Աշխատանքային գրաֆիկը՝ ճկուն:

Հնարավոր է հեռակա ներգրավվածություն՝ առկա անցկացվող քննարկումներին և թրենինգներին պարտադիր մասնակցելու պահանջով:

Հարցերի դեպքում կարող եք գրել վերոնշյալ էլ. փոստի հասցեով կամ զանգահարել +37441895611 հեռախոսահամարով:

** Սույն հնարավորությունը հանդիսանում է մշտական բնույթ չկրող գործողությունների համալիր և համապատասխանում է «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 7) կետին:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Հայաստանի վերափոխման ռազմավարության (ՀՎՌ) թիմը կամավորական հիմունքներով համագործակցության է հրավիրում տարբեր լեզուներով թարգմանիչների:

### Նպատակ.

Ըստ անհրաժեշտության, տարբեր օտար լեզուներով, ինչպես նաև օտար լեզուներից հայերեն տարատեսակ տեքստերի թարգմանությունների իրականացում:

### Նկարագիր.

Առկա ռազմավարական բովանդակության, քննարկման, հաղորդակցական, մեթոդական և հետազոտական մեծ և փոքր նյութերի թարգմանությունների իրականացում, թարգմանված նյութերի խմբագրում և վերանայում: Ներգրավվածությունը հեռակա է, նյութերը կուղարկվեն տարբեր պարբերականություններով՝ ըստ անհրաժեշտության և պայմանավորվածության:

### Պահանջներ.

- առնվազն մեկ օտար լեզվի գերազանց իմացություն,
- լսելու և արագ ընկալելու կարողություն,
- ստեղծագործ և ճկուն միտք,
- վերլուծական և քննադատական մտածողություն,
- հաղորդակցական հմտություններ,
- շարունակաբար սովորելու և զարգանալու ունակություն և ձգտում,
- բարձր արդյունավետության ձգտում,
- կատարելության ձգտում, մանրուքների նկատմամբ ուշադրություն և բարձր կարգապահություն,
- հայրենիքի զարգացման հանդեպ առաքելության զգացում,
- պատասխանատու և պրոակտիվ վերաբերմունք,
- արդյունքին միտվածություն, դիմակայունություն, կոգնիտիվ (իմացական) ճկունություն,
- թիմով աշխատելու կարողություններ,
- բարեվարքության բարձր մակարդակ,
- թվային գրագիտություն,
- համակարգային և կոնցեպտուալ մտածողություն, մեծ պատկերը տեսնելու ունակություն *(որպես առավելություն)*:

### Տրվող հնարավորություններ.

- ☑ անմիջական մասնակցություն ունենալ Հայաստանի զարգացման օրակարգի մշակմանն ու իրագործմանը, ապագայի կերտմանը,
- ☑ կատարելագործել թարգմանչական կարողությունները, ձեռք բերել թարգմանչական մասնագիտական յուրահատուկ փորձ, հարստացնել աշխատանքների պորտֆոլիոն,
- ☑ ձեռք բերել պետական կառավարման համակարգի, այնպես էլ հանրային տարբեր օղակների հետ աշխատանքի հետաքրքիր փորձ և հմտություններ,
- ☑ ծանոթանալ տարբեր ուղղություններում առաջադեմ, փորձագիտական մտքերի հետ, ձեռք բերել տարատեսակ նոր գիտելիքներ,
- ☑ դրական արդյունքների դեպքում ստանալ համապատասխան շնորհակալագիր և(կամ) երաշխավորագիր ՀՀ վարչապետի օգնականի կողմից:

Հայտերի տրամադրում և դիտարկում.

1. Անհրաժեշտ է manvel.melikyan@gov.am հասցեին ուղարկել ինքնակենսագրականը (CV)՝ նամակի վերնագրում նշելով «Թարգմանիչ - դիմում»,
2. ՀՎՌ թիմի կողմից ինքնակենսագրականների դիտարկումից հետո որոշ թեկնածուներ կհրավիրվեն հարցազրույցի,
3. Հնարավոր է թեստային, փորձնական առաջադրանքների տրամադրում:

Հավելյալ տեղեկատվություն.

Հասցե. ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 1:

Աշխատանքային գրաֆիկը ճկուն է, ներգրավումը՝ հեռակա:

Հարցերի դեպքում կարող եք գրել վերոնշյալ էլ. փոստի հասցեով կամ զանգահարել +37441895611 հեռախոսահամարով:

** Սույն հնարավորությունը հանդիսանում է մշտական բնույթ չկրող գործողությունների համալիր և համապատասխանում է «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 7) կետին:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Հայաստանի վերափոխման ռազմավարության (ՀՎՌ) թիմը կամավորական հիմունքներով, 5 ամիս և ավել ժամկետով համագործակցության է հրավիրում կազմակերպչական կարողություններ ունեցող և թվային գործիքները հմտորեն կիրառող անձանց:

### Նպատակ.

Օժանդակել ՀՎՌ շուրջ տարվող աշխատանքների պատշաճ կազմակերպմանը և իրականացմանը:

### Նկարագիր.

Մասնակցություն ՀՎՌ թիմի աշխատանքների կազմակերպմանը և իրագործմանը մասնավորապես, օժանդակություն քննարկումների, թրենինգների և միջոցառումների կազմակերպմանը, գործընկերների հետ կապի և հարաբերությունների ստեղծմանն ու զարգացմանը, հետադարձ կապի ապահովմանը, փաստաթղթերի պատշաճ և կոկիկ ձևավորմանը, կազմակերպչական այլ հարցերի իրականացմանը:

### Պահանջներ.

- կազմակերպչական ջիղ,
- հայոց լեզվի գրավոր և բանավոր գերազանց տիրապետում,
- առնվազն մեկ օտար լեզվի (անգլերեն, ռուսերեն և(կամ) ֆրանսերեն) աշխատանքային մակարդակի տիրապետում,
- պաշտոնական հաղորդակցման և էթիկայի կանոնների իմացություն, դրանց կիրառման կարողություն,
- թվային գրագիտություն, թվային գործիքներից հմուտ օգտվելու կարողություն, ճկունություն, տեխնոլոգիական բանիմացություն,
- շարունակաբար սովորելու և զարգանալու ունակություն և ձգտում,
- կատարելության ձգտում, մանրուքների նկատմամբ ուշադրություն և կոկիկություն,
- պատասխանատու և պրոակտիվ վերաբերմունք, բարձր կարգապահություն,
- հայրենիքի զարգացման հանդեպ առաքելության զգացում,
- բարձր արդյունավետության ձգտում,
- արդյունքին միտվածություն, դիմակայունություն, կոգնիտիվ (իմացական) ճկունություն,
- թիմով աշխատելու կարողություններ,
- ժամանակի կառավարման կարողություն
- արագ կողմնորոշվելու ունակություն,
- բարեվարքության բարձր մակարդակ,

- փոքր թիմեր ղեկավարելու ունակություն և փորձառություն *(որպես առավելություն),*
- ստեղծագործ և ճկուն միտք *(որպես առավելություն),*
- համակարգային և կոնցեպտուալ մտածողություն, մեծ պատկերը տեսնելու ունակություն *(որպես առավելություն):*

Տրվող հնարավորություններ.

- ☑ անմիջական մասնակցություն ունենալ Հայաստանի զարգացման օրակարգի մշակմանն ու իրագործմանը, ապագայի կերտմանը,
- ☑ ձեռք բերել պետական կառավարման համակարգի, այնպես էլ հանրային տարբեր օղակների հետ աշխատանքի հետաքրքիր փորձ և հմտություններ,
- ☑ աշխատել ճկուն և ստեղծարար միջավայրում, ձեռք բերել յուրահատուկ փորձառություն,
- ☑ ունենալ անհատական զարգացման պլաններ և մասնակցել համապատասխան թրենինգների, ստանալ արդյունքների վերաբերյալ հետադարձ կապ և գնահատում, ապահովել մասնագիտական աճ,
- ☑ դրական արդյունքների դեպքում ստանալ համապատասխան շնորհակալագիր և(կամ) երաշխավորագիր ՀՀ վարչապետի օգնականի կողմից:

Հայտերի տրամադրում և դիտարկում.

1. Անհրաժեշտ է manvel.melikyan@gov.am հասցեին ուղարկել ինքնակենսագրականը (CV)՝ նամակի վերնագրում նշելով «Ադմինիստրատիվ օգնական - դիմում»,
2. ՀՎՌ թիմի կողմից ինքնակենսագրականների դիտարկումից հետո որոշ թեկնածուներ կհրավիրվեն հարցազրույցի,
3. Հնարավոր է թեստային, փորձնական առաջադրանքների տրամադրում:

Հավելյալ տեղեկատվություն.

Հասցե. ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 1:

Աշխատանքային գրաֆիկը՝ ճկուն:

Հարցերի դեպքում կարող եք գրել վերոնշյալ էլ. փոստի հասցեով կամ զանգահարել +37441895611 հեռախոսահամարով:

** Սույն հնարավորությունը հանդիսանում է մշտական բնույթ չկրող գործողությունների համալիր և համապատասխանում է «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 7) կետին:*